

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.08.2020թ. թիվ 2011455378 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<11>> 09 2020թ. 7-13- 11207

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Մելիք Բաղդասարյանի ՄԴ/118671-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտայի 34/1 շենքի 12 բնակարանի բնակիչ Մելիք Բաղդասարյանը դիմումում իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.08.2020թ. թիվ 2011455378 որոշմանը՝ նշելով, որ ավտոմոբիլի աջ կողմի անիվները անցնում են կետագծի վրայով, իսկ ձախ անիվները խախտում են հոծ գիծը:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկները չեն կարող վարչական ակտը վերանայելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հաղվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 60-րդ կետի համաձայն՝ եթե երթևեկելի մասը գծանշմամբ բաժանված է գոտիների, ապա տրանսպորտային միջոցների երթևեկությունը պետք է իրականացվի նշված գոտիներով: **Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 35-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների համընթաց հոսքերն իրարից բաժանող «Հոծ գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:**

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.08.2020թ. թիվ 2011455378 որոշմամբ արձանագրված իրավախախտումն ամրագրած տեսանյութի դանդաղեցված և դրվագային ուսումնասիրությունը հստակ ապացուցում է, դիմումատուին պատկանող <<NISSAN>> մակնիշի 07 AM 808 հաշվառման համարանիշի տրանսպորտային

միջոցը 24.07.2020թ. ժամը 15:00-ին Երևան քաղաքի Ուլնեցի-Սևակ փողոցների խաչմերուկի հատվածում 1.1 հոծ գիծ գծանշումը առջևի երկու անիվներով ամբողջությամբ հատելու փաստը, որը անխուսափելիորեն չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով:

Այսպիսով հիմնավորվել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին վերը նշված որոշումն իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 11.08.2020թ. թիվ 2011455378 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մելիք Բաղդասարյանին:



[Handwritten signature]
Ե. Կարապետյան